

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի ֆինանսավորմամբ Հայաստանի Հանրապետության հյուսիսային միջանցքի արդիականացման ծրագրի շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության և Վրաստանի պետական սահմանի «Սաղախլո-Բագրատաշեն» անցման կետի տարածքում Դեբեդ գետի վրա նոր կամրջի կառուցման մասին

Ծրագրի անվանում՝ Հյուսիսային միջանցքի արդիականացման ծրագիր, Հայաստանի Հանրապետության և Վրաստանի կողմից Բագրատաշենի պետական սահմանի անցման կետի տարածքում Դեբեդ գետի վրա նոր կամրջի կառուցում:

Երկիր՝ Հայաստան, Վրաստան
Քիզնես հատված՝ Տրանսպորտ
Ծրագրի ID՝ 43826

Գնման տեսակ՝ Նախագծման և շինարարական աշխատանքներ, Խորհրդատվական ծառայություն,
Պատվիրատուի անունը՝ Հայաստանի Հանրապետություն և Վրաստան
Ծանուցման տեսակ՝ Գնումների ընդհանուր ծանուցում

Պատվիրատուները վերոնշյալ ծրագրի համար համատեղ օգտագործելու են Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական բանկի (ՎԶԵԲ) կողմից տրամադրվող վարկի միջոցները:

Ֆինանսավորման մանրամասներ.

1. Ծրագրի հաշվարկված արժեքը կազմում է ընդամենը 10,000,000 Եվրո,
2. Ծրագրի իրականացման նպատակով կօգտագործվեն ՎԶԵԲ-ի կողմից տրամադրված վարկը, ինչպես նաև Պատվիրատուների սեփական միջոցները,
3. Պատվիրատուները կֆինանսավորեն ծրագրի իրականացման ընթացքում առաջացող բոլոր հարկերը:

Ծրագրի հիմնական նպատակն է արդիականացնել և բարելավել սահմանային անցակետն ու ճանապարհային մուտքի ենթակառուցվածքները Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև սահմանի երկայնքով՝ դյուրինացնելով անձանց և տրանսպորտային միջոցների միջսահմանային շարժը, դրանով իսկ նպաստելով տարածաշրջանային առևտրի զարգացմանն ու համագործակցությանը:

Ֆինանսավորման բաղադրիչներն են՝

- Բագրատաշենի նոր կամրջի նախագծում և շինարարություն (երկկողմանի կամուրջ հանդիպակաց երթևեկելի հոսքերի համար),

- Վերոնշյալ նախագծման և շինարարության պայմանագրի վերահսկում:

Վերոնշյալ մրցույթները նախատեսվում է մեկնարկել 21/03/2016թ-ին:

ՎԶԵԲ-ի կողմից իրականացվող վարկի միջոցներից ֆինանսավորվող պայմանագրերը բաց կլինեն ցանկացած ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ընկերությունների համար:

ՎԶԵԲ-ի կողմից տրամադրված վարկային միջոցները չեն կարող օգտագործվել որևէ վճարման կամ ապրանքների ձեռքբերման համար, եթե նման վճարումը կամ ձեռքբերումը արգելվում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշմամբ, Միավորված ազգերի կանոնադրության VII գլխի և Պատվիրատու երկրների օրենսդրության կամ պաշտոնական կանոնադրության համաձայն:

Ծրագրով նախատեսված մրցույթները կանցկացվեն էլեկտրոնային գնումների միջոցով՝ օգտագործելով ՎԶԵԲ-ի էլեկտրոնային գնումների հարթակը: Հետաքրքրված հայտատուները պետք է գրանցվեն ECEPP-ում՝ այս հղման միջոցով՝ <https://ecept.ebrd.com/delta/viewNotice.html?displayNoticelId=3954549> :

Պատվիրատուների հասցեներ՝

Հայաստանի Հանրապետության Տրանսպորտի և կապի նախարարություն
«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0002, Պուշկինի 58
Հեռ. +374 (60) 50 68 70
Կոնտակտային անձ՝ Էռնա Ամիրխանյան – Գնումների և պայմանագրերի կառավարման մասնագետ
Էլեկտրոնային հասցե՝ erna.amirkhanyan@northsouth.am

Վրաստանի տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն
Վրաստանի ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտ
Հասցե՝ Վրաստան, Թբիլիսի 0160, Ալ. Կազբեգի փ. 12
Հեռ. +995 (322) 37 05 08
Կոնտակտային անձ՝ Նուզդար Գասվիանի - Ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտի նախագահի պաշտոնակատար
Էլեկտրոնային հասցե՝ info@georoad.ge